

նուած է մագաղաթի մեծութենէն: Նախապէս կենդանեաց մորթը քառակուսի ձևով կը հաստանէին և զայն երկու կը ծալէին և կը ձևանար թերթը (in folio).

Հին դարուց ժամանակ մագաղաթով առաջին երեսին վրայ միայն էին գրութիւնք, և յետակողմին վրայ կը գրուէր ստորագրութիւնք կամ գրութեան վերջաւորութիւնք: Երկու երեսաց վրայ հաւասարապէս գրութիւնքն ընդհանրացած են յիշրոպա վեշտասաներորդ դարուն մէջ:

Մագաղաթին տեղն անցաւ բոլորը, որ ընդհանրապէս կը յօրինուի՝ կտավ, կանեփի, բամբակի ցնցոտիներէն (chiffon), ինչպէս նաև հնդկային եղէգի, աղամաթը գենույ, յարդի և այլ առնոց նման իրե-

րու կեղեկներէն: Ընտիր թուղթերը կը շինուին կտավի և կանեփի ցնցոտիներէն. բամբակէ շինուածները կակուղ և թոյլ են, բայց միւսներուն հետ խառնուելով՝ ազնուագոյն թուղթերն են:

Ցնցոտիներէ յօրինուած թղթոյն գիւտը Եւրոպայոյ մէջ ԺԻ. դարուն եղած է, մինչ բամբակի թուղթի գործածութիւնը իննեւորդ դարուն Արևելքէն կ'անցնի Եւրոպա, որուն գիւտը Չինաստանի կ'ընծայուի՝ ըրիստոնէութեան առաջին կամ երկրորդ դարուն սկիզբը: Ասոնցմէ զատ կը յիշատակուի և մետաքսէ թուղթ՝ Պարսկաստանի մէջ 632 թուականին. ինչպէս բրնձէ թուղթ՝ Ի Ճարուն և Ի Չինաստան:

Ո. Կ.

Կ Ե Ն Դ Ա Ն Ա Գ Ի Ր Տ Ա Ն Դ Է Ի

ՀՈՒՎՄԱՏ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Ս. ԽԱՏ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ՈՐՄԱՆԿԱՐԻՆ ՄԷՋ

(Շար. տես Բզմ. 1922 էջ 172)

Ըստ մեր կարծեաց ԺԻ. դարուն սկիզբը՝ որ տեղի կ'ունենար՝ առաջին մեծ յորելանին հարկւրամակը՝ հանդիպած պիտի ըլլայ առաջին նորոգութիւնը, և ասիկայ կ'ըսենք կայծիճով, դատելով ԺԻ. դարուն արուեստին զաղափարական և կրօնական պարզութիւնէն, որ այնքան տարբեր է աշխարհիկ ճաշակէն, որ յիւրաի աւելի կատարեալ և աւելի զեղեցիկ է յաջորդ դարերուն՝ մասնաւորապէս ԺԻ. դարուն մէջ:

ԺԻ. դար այնպէս բարի և անարատ կը փայլի՝ արդեամբ ժամանակին կրօնական ազդեցութեան՝ որ կ'արգիլէ արուեստագիտին մինչև յայտնի ցուցնելու մարմնոյ մասերու մերկութիւնը, նաև պարկէշտութեան ամենասեղմ սահմաններու մէջ ալ, այնպէս որ կը պարտաւորէ արուեստագէտը պատկերը խղճմտութեամբ զգեստաւորելու:

Ազգեական նկարը պէտք էր իր ամբողջութեան մէջ տարբեր ըլլալ ներկայէս: Հաւանա-կանաբար արուեստագէտը տեսանելի ըրեր է միայն խաչի գիւտը, իրարմէ բաժնուած խումբերով, իւրաքանչիւրը ունի իր պաշտօնը հրաշքին մեծ տեսարանին մէջ: Այս խումբերուն

բեկորները դեռ կը տեսնուին ուրիշ դէմքերու մէջ՝ որ կ'երևի աւելցած են երկրորդ ձեռքէ մը: Ազգեական նկարին բնագործը պահող անձինքն են առաջին խումբի կիները՝ ձախէն սկսեալով, և երրորդին մէջ իրենց կերպարանքին և զգեստի ծալքերուն մէջ պահեր են նախնական մարքութիւն և ոճին պարզութիւնը: Նոյնպէս սկզբնական են Ս. Հեղինէի և Ս. Մարկոսի գլուխները, նոյնպէս և փոսին քով կանգնած քահանայից խումբը. դարձաւ քահանայապետին գլուխը և այն անձանցը՝ որ ձիուն քով ժողովուած են: Գլուխներուն կերպարանքին մէջ պարզութիւնն ու ազնուութիւնը՝ որոնք խանգարուած չեն նորոգութիւնէ՝ հիշնալի են, և անոնց նկարչին նկատմամբ կրնանք ըսել՝ վազարիի խօսքերով (նկատմամբ Պետրոս Լաւրադի Սիննացի նկարչին), որ «Իրեն ներկայացուցած դէմքերուն մէջ զեղեցիկ զարդով պնեալ և իրենց զգեստոց մէջ պարզօրէն ծածկուած են, և կը ցուցնեն իրենց գլուխներուն երևոյթին մէջ մեծվայելչութիւն, և իրենց կերպարանաց տրամադրութեան մէջ ամենազեղեցիկ շօքութիւն»:

Այս վերոյիշեալ նորոգութիւնը տեղի ունեցած

է յօր. դարուն վերջերը, որ է ըսել մեծ Յորեն-լեանին երրորդ հարիւրամիակին: Այս նորոգու-թիւնը մայր եկեղեցւոյն մէջ մասնական եղած է, այսինքն միայն մասնիկ մը. նորոգողին ար-ժանիքը կը կայանայ շինութեան կամ յարմա-րեցուցման մէջ Ս. Հնդիկնէի մատարան, որ զար-դարուած է միւստիոններով, որուն մէջ դրուած է միանգամայն Սրբուհոյն արձանը, հին կիտա-ճան մը ձիւնոնի, որուն վրայ աւելցուցած են գլուխը և թեկը, և որուն նման օրինակ մ'ալ կը գտնուի Դերմէի ազգային թանգարանին մէջ:

Այս նորոգութեան նկատմամբ կարելոյ տե-ղեկութիւն մը կայ Փրանկիսկոս Ապրդդիինի հանրածանօթ գրքին մէջ. «Յաղագս սքանչելի նորոգութեանց Հոռոմ քաղաքի». որուն մէջ՝ էջ 6 կը կարդանք. «Ելուտաղեմայ Ս. Խաչ եկեղեցին շատ տեղեր ամենագեղեցիկ մատուցող է միւստիոնով Գերայարդոյ Բեռնաւորինոս Սպանիա-ցի ծիրանաւորէն նորոգուած է, և կայ պատ-կերն այս ամենագէտ անձին, որ է բազմահմուտ եկեղեցական արարողութեանց»:

Այս բնագրէն կը հասկցնի որ նորոգութիւնը կատարուած է բազմաթիւ տեղերը, և ասիկայ կը հաստատէ թէ կանխաւ բան մը կայ եղեր. որով ստույգ է որ կողակին առաջին զարդարանքը միայն յօր. դարուն վերջը չէ կատարուած: Բայց որովք արդեօք եղած են չտեղաւոր կամ նորոգուած տեղերը հրամանով Ծիրանաւորին, Դիւրին կ'ե-րեի պատասխանը, քանի որ բացատրեցիք ըստ բաւականի ցուցնելու համար սկզբնական ու-մանկարի մը գոյութիւնը՝ յառաջ քան գլխատա-կեանները Զիարդըրդոյ տիկնոջէն և ուրիշներէն: Հոս համառօտիւ պիտի ներկայացնենք մեր դի-տողութեանց արդիւնքը, ձեռնհաս անձանց թող-լով մեր ապացոյցներու արժէքին նկատմամբ լինելի դատաստանը:

Նորոգութեանց մէջ, ըստ փափաքանաց ծի-րանաւորին, մեզի կ'երևի որ աւելի կը տիրա-նայ զաղափարն խաչ դիւտի և խաչվերացի: Խաչվերացին մէջ կը սկսի խաչին պաշտամունքը, և հոս կը ներկայանայ ամենէն առաջ ծիրանա-ւորը՝ որ կը հրամայէ իր պատկերը մէջը ներ-ածել: Նկարիչն որ այլևայլ տեղեր փոփոխու-թիւններ պիտի ընէ՝ չէր կրնար իսկապէս ներ-կայացնել խաչվերացը, որպէս զի պատկերն իր վարձանին հասնէր ըստ կամի նկարչին. ուստի պարտաւորուեցաւ ստեղծել այն երկու խումբերը պատկերաւորներու՝ որ կեցեր են գետակի մը երկու եզերքները, և ընդ մէջ ստանց և ձիւտոր յառաջացող կայսեր խումբին՝ ստիպուած եղեր

է թողուլ Քահանայապետը, մոզերը և երևա-կայեալ հրեաներու խումբը: Այս հնթադրու-թիւնը զրեթէ ճշմարիտ է այն անձին համար՝ որ դիտէ թէ Քահանայապետին թիկունքէն զինուո-րական մը կու գայ. և այս կարելի չէ տեղի ու-նենայ՝ եթէ երկուքն ալ միևնոյն օրմանակի նկարուած ըլլային: Նոյնպէս և կայսրն իր ձիովը նոր յաւելուած մ'է, և նախ ձիուն ոտ-քերը բնական ընթացք մը չունին, երկրորդ՝ ձիուն ետեի մասը կիսով չափ կը պակսի, մինչ-դեռ արուեստագէտներն աւելի կ'ընտրեն ցուցնել թագաւորի մը կամ կայսեր ձին ամբողջովին և զեղեցկազարդ. երրորդ՝ ձին երկու անձ կը ծած-կէ, որոնց միոյն միայն ոտքերը կը տեսնուին և միւսին՝ զգեստին ծալքերը. ըստ այսմ չէր նկարեր ո և է արուեստագէտ՝ եթէ բոլորովին ազատաբար գործէր. չորրորդ՝ խաչին կողմնակի մասը ծառի մը վերին ծայրը կը ծածկէ, և նո-րոգողն այսպիսի բան մը չէր ընէր՝ եթէ իր նորոգութիւնէն առաջ դաշտակարը չըլլար: Նոյն-պէս արդի նորոգութիւն է փոսը փորող խումբը՝ և այն անձանց՝ որք ճշմարիտ խաչին ապացու-ցին ներկայ կը գտնուին:

Մինչև հոս մեր ըսածներէն կը համարինք որ կարելի է հետեւեալ եզրակացութիւնն հանել, թէ մեծ որմանկարը նախ մէջն ունէր միայն խաչի Գիւտը, Սիւնացի արժանաւոր արուեստագետէ մը նկարուած՝ չորրորդ դարուն վերջերը կամ առաջին քառորդին աւանները. և թէ դարուս վերջերը Բեռնաւորինոս ծիրանաւորին ձեռքով նորոգուած է որմանկարը, այսինքն փոփոխած է ի բազում տեղիս, վրան աւելցնելով խաչ-վերացի մասը, և այս գործիս համար հաւանա-կանաբար աշխատեր են երիտասարդ աշակերտ-ները ֆինդուրիգիոյի կամ ֆերուհինոյի արուես-տագիտին առաջնորդութեամբ:

Ի կնիք բանիցս՝ որմանկարին մէջ Տանդէի ներկայութիւնը մեր նկարագրած պարագանե-րուն մէջ ամենահաւանական ապացոյց մ'է, և թէ նախնական նկարին հեղինակը հայրենակից մը պէտք է եղած ըլլայ և սքանչացող մը գե-րագոյն բանաստեղծին, որուն և քաղաքական զաղափարներուն համակիր, որ յաշողեր է հաւ-ճարեղ ստեղծագործութեամբ՝ յարմարցնելով բա-րեպաշտական աւանդութիւններ, թողեր է ապա-գայ սերունդներուն իր հայրենեաց մէջ պատա-հած դէպքերը:

Թրգմ. Հ. Ե. ՍԻՐՈՒՆ.

Հ. ԳԱՐԻ. ՆԱԽԳԵՏՆԵՍ

ՎԵՐՋ